

Հաստատում էմ

Տնօրեն

«15»

Դ. Կոստանյան

2023թ.



ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ

Տեխնոլոգիա (տղաներ)

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հմուտ ձեռքեր

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Մարեսա Հարությունյան

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել

Բազմաբարձրագրական առարկաների

մեթոդիկավորման 10.05.2023թ նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդիկավորման նախագահ

[Signature]
(ստորագրություն)

Դաջունց Ա.

(ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

[Signature]
(ստորագրություն)

Ավանեսյան Ա.

(ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ

[Signature]
(ստորագրություն)

Գևորգյան Ա.

(ազգանուն, անուն)

2023թ.

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «Հմուտ ձեռքեր»

ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝

ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 5-9-ԲԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Շաբաթական 2 դասաժամ

Ընդհանուր տևողությունը՝ 68 դասաժամ, որից՝ 16 դասաժամ տեսական

52 դասաժամ գործնական

ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝

«Հմուտ ձեռքեր» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը՝ գրաֆիկայից, փայտամշակման արհեստանոցի հիմնական պահանջներից, փայտատեսակներից, դրանց հետ աշխատանքից. չափանշում, ռանդում, սղոցում, շաղափում, վերջնամշակում, գեղերեսում, մետաղամշակման աշխատանքներից. չափանշում, ուղղում, ծռում, կտրում, խարտոցում, զոդում, գամում, մեքենագիտությունից, ինչը կնպաստի նաև «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:

Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ, կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս, վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից, ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա, ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ, դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր, դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր:

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Աշակերտների մոտ զարգացնել ստեղծագործական միտքը, ուսուցանել տեխնոլոգիական գիտելիքներ, աշխատանքային հմտություններ, ճանաչողության զարգացում, աշխատասիրության դաստիարակում, տարբեր ապրանքների, իրերի պատրաստում, գրաֆիկական ունակությունների և կուլտուրայի ձևավորում:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է՝

1. Գրաֆիկա, փայտամշակման արհեստանոցի հիմնական պահանջները, փայտատեսակները, դրանց հետ աշխատանքը (չափանշում, ռանդում, սղոցում, շաղափում, վերջնամշակում, գեղերեսում), մետաղամշակման աշխատանքները (չափանշում, ուղղում, ծռում, կտրում, խարտոցում, զոդում, գամում), մեքենագիտությունը:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Գրաֆիկա, փայտամշակման արհեստանոցի հիմնական պահանջները, փայտատեսակները, դրանց հետ աշխատանքը (չափանշում, ռանդում, սղոցում, շաղափում, վերջնամշակում, գեղերեսում), մետաղամշակման աշխատանքները (չափանշում, ուղղում, ծռում, կտրում, խարտոցում, զոդում, գամում), մեքենագիտությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է

- Իմանա ինչ է գրաֆիկան

- իմանա փայտի, փայտատեսակների, դրանց նշանակության մասին, ծանոթ լինի օգտագործվող գործիքներին և արհեստանոցի կահավորմանը
- իմանա ինչ է բարակ թերթամետաղը, ինչպես են ողողում, կտրում, չափանշում և ծռում
- իմանա ինչպես է կատարվում գայլիկոնումը և դետալների միացումը գամերով
- ծանոթանա Հայաստանի նախկին և ժամանակակից գեղարվեստական արհեստներին
- իմանա մեքենագիտության մասին տեղեկություններ, դրանց տեսակները, դերի կարևորությունը կյանքում և գիտության մեջ
- կատարի պարզագույն էլեկտրական շղթայի հավաքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասձանի և գործնական առաջադրանքների միջոցով: Աշակերտին կտրվի նախօրոք կազմված հարցաշար գծագրական թղթի ֆորմատների վերաբերյալ: Կհանձնարարվի գծել հիմնական մակագրություն, դնել պայմանական նշաններ, կիրառել տարբեր մասշտաբներ: Աշակերտին կտրվի համապատասխան գործիքներ, նյութեր որևէ առարկա պատրաստելու համար.

- Օրինակ՝ սեղան, աթոռ, ծաղկման, թռչյունների բույն և այլն:
- Պլանավորել տեխնոլոգիական գործընթացը:
- Կատարել պատրաստված առարկաների չափանշումներ:
- Աշակերտները տեղեկացված լինեն 20-21րդ դարերում մարդկության զարգացման գործում տեխնիկայի և տեխնոլոգիայի նվաճումների և հայտնագործությունների մասին:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները, ոչ էական փոքր թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական և տեսական պարապմունքների միջոցով, ըստ թեմատիկ հաջորդականության: Ուսուցման ընթացքում օգտագործվում է գծագրական գործիքներ և նյութեր, սղոցներ, ռանդաներ, շաղափիչներ, խարտոցներ, մեխեր, պտուտակներ, սսսինձներ, պտուտակիչներ, քցաններ, հղկաթղթեր, մուրճեր, մկրատներ և այլն:

№	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
1	Ծանոթություն տեխնոլոգիայի առարկաներին (արհեստանոց, դագգահներ, փայտամշակման, մետաղամշակման գործիքներ և այլն)	2	1	1
2	Գրաֆիկա (ծանոթություն գծագրական գործիքներին, նյութերին, դրանց միջոցով երկրաչափական կառուցումների կատարելուն)	2	1	1
3	Հատվածի բաժանումը հավասար մասերի, շրջանագծի բաժանումը 4 հավասար մասերի	2	1	1
4	Շրջանագծի բաժանումը 3, 6 և 8 հավասար մասերի	2	1	1
5	Փայտամշակում: Ծանոթացնել փայտերի տեսակներին, հատույթներին և կառուցվածքին	2	1	1
6	Սովորեցնել փայտանյութի կտրումը սղոցով	2	1	1
7	Պատրաստել սեղան, կտրել դետալները, կատարել չափանշում	2		2
8	Սեղանի պատրաստման համար անհրաժեշտ դետալների միացում և վերջնամշակում	2		2
9	Պատրաստել աթոռ	2		2
10	Պատրաստել տնակ	2		2
11	Պատրաստել թռչնի բույն	2		2
12	Պատրաստել ծաղկաման	2		2
13	Պատրաստել ցուցափայտ	2		2
14	Պատրաստել աստիճան	2		2

15	Պատրաստել նկարի շրջանակ	2		2
16	Լուցկու հատիկներով, սոսնձով և սովարաթղթերով պատրաստել կառույցներ	2		2
17	Թղթով սոսնձով պատրաստել ռուբր (տոնածառի խաղալիք)	2		2
18	Ամսագրի թերթերով, սովարաթղթով և սոսնձով պատրաստել գրչաման	2		2
19	Ծանոթացնել փորագրության գործիքներին, կատարել պարզագույն փորագրություններ	2	1	1
20	Փորագրել տառեր և թվեր	2		2
21	Փորագրել խաչեր	2		2
22	Փորագրել տարբեր զարդանախշեր	2		2
23	Կատարել խարափորագրում	2		2
24	Մետաղամշակում: Ծանոթացնել մետաղներին, դրանց տեսակներին, ստացմանն ու կիրառմանը	2	2	
25	Սովորեցնել թերթամետաղի կտրումը, ուղղումը, ծռումը	2		2
26	Թերթամետաղով պատրաստել մոմակալներ	2		2
27	Թերթամետաղով պատրաստել վառարաններ	2		2
28	Բարակ թերթամետաղով պատրաստել սեղաններ	2		2
29	Մետաղալարով պատրաստել ծաղիկներ, կենդանիներ, երկրաչափական մարմիններ	2		2
30	Մեքենագիտություն: Մեքենագիտության տարրեր, մեքենաների տեսակները և կիրառումը	2	2	
31	Մեքենագիտության ոլորտում գիտատեխնիկական նվաճումները էլեկտրատեխնիկա:	2	2	
32	Էլեկտրական էներգիայի ստացումը, հաղորդիչներ, անհաղորդիչներ, հաղորդալարեր	2	1	1
33	Պարզագույն էլեկտրական շղթայի մոնտաժում	2		2
34	Պարզագույն էլեկտրական շղթայի հավաքում	2		2
ԸՆԴԱՄԵՆԸ		68	16	52

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. Գ. Դուբով, Ա. Կ. Բեդենկով, «Պարապմունքները դպրոցական արհեստանոցներում», ձեռնարկ V և VI դասարանների աշակերտների համար, Հայպետհրատ, Երևան 1963
- Բ. Վ. Տարասով, «Դպրոցականի ինքնաշենները», «Լույս» հրատարակչություն, Երևան 1974